# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

**<<ՇՀԱՊՁԲ-15/7-4-2016 ԵՊԲՀ>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

**ք. Երևան** **_17_ _հոկտեմբերի_ _2016թ._**
**ժամը _10[30]_**

**Մասնակցում էր հանձնաժողովը հետևյալ կազմով՝**
**Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Բարոյանը**
**Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մանուկյանը**
**Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Ղարիբյանը**
**Բացակայում էր՝ Ա.Շահնազարյանը**

**1. Տեղեկատվություն գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**
**(Ս.Բարոյան)**

1.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 44-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Ապրանքի անվանումը | Ապրանքի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Մալուխ այլումինե 1 | 408000 |

1.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների | | |
|---|---|---|---|
| | Անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Կապի միջոցները |
| 1 | <<Էլիպս գրուպ >> ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Խորենացու 24 | Էլ. հասցեն՝ mehrabyan_karen@mail.ru Հեռ. 077 61 04 00 |
| 2 | <<Էկոմիքս >> ՍՊԸ | ք. Երևան, Ա.Բաբաջանյան 60/2 | Էլ. հասցեն՝ ecomixllc@gmail.com Հեռ. 055 11 63 11,093 02 83 79 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**2. Տեղեկատվություն հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին**
**(Ս.Բարոյան)**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին**
**(Ս.Բարոյան)**

3.1 << Էլիպս գրուպ >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 << Էկոմիքս >> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան,բացառությամբ՝

-Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարության մեջ (Հավելված 4.2) բացակայում է ծագման երկրի սերտիֆիկատի ներկայացման վերաբերյալ պարբերությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին**

4.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացված են Հավելված N 1-ում (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**5. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**
**(Ս.Բարոյան)**

5.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 45-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել սույն նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև 19.10.2016թ.-ի ժամը $10^{30}$-ն շտկել արձանագրված անհապատասխանությունները հրավերով սահմանված ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**Հանձնաժողովի նախագահ՝** _____ **Ս.Բարոյան**
*(ստորագրությունը)*

**Հանձնաժողովի անդամ՝** _____ **Հ.Մանուկյան**
*(ստորագրությունը)*

**Հանձնաժողովի քարտուղար՝** _____ **Մ. Ղարիբյան**
*(ստորագրությունը)*

| | | | | | Հավելված 1 "ՇՀԱՊՁԲ-15/7-4-2016 ԵՊԲՀ "Ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրության(Արձանագրություն 2) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | "Էլիպս գրուպ"ՍՊԸ | | | "Էկոմիքս"ՍՊԸ | | |
| Չ/հ | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակը | Նախահաշվային գին | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ն ներառյալ | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ն ներառյալ |
| 1 | Մալուխ ալյումինե 1 | մետր | 170 | 408,000.00 | 272000 | 54400 | 326400 | 224683.34 | 44936.67 | 269620.0 |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

**<<ՇՀԱՊՁԲ-15/7-4-2016 ԵՊԲՀ>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

**ք. Երևան** **_20_ _հոկտեմբերի_ _2016թ._**
**ժամը _13[00]_**

**<u>Մասնակցում էր հանձնաժողովը հետևյալ կազմով՝</u>**
**Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Բարոյանը**
**Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մանուկյանը**
**Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Ղարիբյանը**
**Բացակայում էր՝ Ա.Շահնազարյանը**

**1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ անհամապատասխանությունների շտկման մասին**
**(Ս.Բարոյան)**

1.1 << Էկոմիքս >> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված ձևով:
Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**2. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և առաջին ու հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին**
**(Ս.Բարոյան)**

2.1 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.
-Գնահատել բավարար << Էկոմիքս >> ՍՊԸ -ի, << Էլիպս գրուպ >> ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտերը
2.2 Ներկայացված և բավարար գնահատված հայտերի հիման վրա առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ հայտատուներին:

| Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | << Էկոմիքս >> ՍՊԸ |
| 2 | << Էլիպս գրուպ >> ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**3. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին**
**(Ս.Բարոյան)**

3.1 Գնումների մասին << օրենսդրության պահանջներին համապատասխան՝
ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.
բ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 25-ը ներառյալ, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 3.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**Հանձնաժողովի նախագահ՝** _____ **Ս.Բարոյան**

*(ստորագրությունը)*

**Հանձնաժողովի անդամ՝** _____ **Հ.Մանուկյան**

*(ստորագրությունը)*

**Հանձնաժողովի քարտուղար՝** _____ **Մ. Ղարիբյան**

*(ստորագրությունը)*